վերջին Տիկինը 1833 թ. գոհ է դնացել Քոռ Հիւսէին Բէկին, որ իւրացրել է բերդը, ջնջել է Պոռի փաշայի տոհմը եւ ինքն էլ հալածուել է Կարսի Ահմէդ փաշայից. փախել է Տայոց-քար, ապաստանել է Ոլորի բերդը: Այստեղից սրան կալանաւորեց տարաւ Էրզրում Յովհաննէս եպ. Սելիմեանը, ուր կախեցին եւ վերջ տուին ինչպէս Արդանուշի, այնպէս էլ Ճորոխի Աւազանի վասալական Բէկերին:

Արդանուշի Կլարջէտ գիւղը ցոյց է տալիս նոյնպէս դաւառի անուան պահպանութիւնը 3000—4000 տարուց ի վեր: Կլարջէտի բերդը մի ժամանակ այնպիսի հռչակ է ունեցել, որ ամբողջ դաւառին տիրել եւ իր անունն է վրան դրել: Այս օր Կլարջէտի բերդի պարիսպները, ապարանքի եւ տաճարի աւերակները ցոյց են տալիս, նրա փառաւոր անցեալը. ուր նստել են Կլարջէտի պատէգիները: Կլարջէտից երկու կիլոմետր հեռաւորութեան վրայ է Ուրթամասի ամրոցն ու աշտարակը, որոնք աւերակ են. աշկատարեան որմերով անհամեմատ հին են: Ուրթամասին կամ Ուր-Ֆամասի Կլարջէտի պատմութիւնը, նախկին պատէգիների գոյութիւնը հաստատում են Ակկադների Ուրի եւ Ուրեկի, Հաթթերի Ուր-դա, Միդանիայի Ուրֆա քաղաքների գոյութեան շրջանը: Տարօրինակը սրանց աւերակների գոյութիւնը, տոկունութիւնը, պահպանութիւնը չէ, այլ ժողովրդի պահպանողականութիւնն